ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանին Չեխիայի Հանրապետություն (Պրահա) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Դավիթ Հարությունյան:

Գործուղվող անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարար:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Չեխիայի Հանրապետություն (Պրահա), 2017թ. հուլիսի 20-ից 22-ը:

Հրավիրող կողմը՝ Չեխիայի Հանրապետության արդարադատության նախարար:

Գործուղման նպատակը՝ Հանդիպում Չեխիայի Հանրապետության արդարադատության նախարար Ռոբերտ Պելիկանի հետ:

Քննարկված թեմաները՝ քննարկվել են Հայաստանի Հանրապետության և Չեխիայի Հանրապետության դատաիրավական համակարգերին և իրավական փոխօգնությանը վերաբերող հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը Չեխիայի Հանրապետության արդարադատության նախարար Ռոբերտ Պելիկանի հրավերով 2017թ. հուլիսի 20-ից 22-ը աշխատանքային այցով գտնվել է Չեխիայի Հանրապետությունում (Պրահա):

Հարկ է նշել, որ մինչ ՀՀ արդարադատության նախարարի Պրահա մեկնելը, Չեխիայի Հանրապետության արդարադատության նախարար Ռոբերտ Պելիկանի՝ ՀՀ այցի անհնարինության պայմաններում, 2016թ. նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 1-ը Հայաստանի Հանրապետություն է այցելել Չեխիայի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Պետր Յագերի գլխավորած պատվիրակությունը:

Այցի ընթացքում ՀՀ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը հանդիպումներ է ունեցել Չեխիայի Հանրապետության բարձրաստիճան պաշտոնյաների, մասնավորապես, արդարադատության նախարար Ռոբերտ Պելիկանի, Չեխիայի պրոբացիայի և միջնորդության ծառայության ղեկավար կազմի հետ:

Չեխիայի Հանրապետության արդարադատության նախարարի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր, մասնավորապես, իրավական փոխօգնության ոլորտում համապատասխան իրավապայմանագրային դաշտի ստեղծման հնարավորությանը, իրավական ոլորտում երկու պետությունների միջև առկա համագործակցության խորացմանը, առկա օրենսդրական և դատական բարեփոխումներին, պրոբացիոն ծառայության հիմնախնդիրներին առնչվող հարցեր:

ՀՀ արդարադատության նախարարը հանդիպման ընթացքում Չեխիայի Հանրապետության արդարադատության նախարարին ներկայացրել է ՀՀ-ում տեղի ունեցած սահմանադրական բարեփոխումների արդյունքները, որով կառավարման կիսանախագահական մոդելից անցում է կատարվել կառավարման խորհրդարանական մոդելին: Չեխիայի Հանրապետության արդարադատության նախարարը հանդիպման ընթացքում ներկայցրել է խորհրդարանական կառավարման իրենց երկրի փորձը:

Երկու երկրների արդարադատության նախարարների միջև կայացած հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաև ՀՀ Սահմանադրությունից բխող իրավական ակտերի փոփոխման, նոր սահմանադրական օրենքների ընդունման գործընթացներին:

Չեխիայի Հանրապետությունում գտնվելու ընթացքում ՀՀ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը այցելել է նաև Չեխիայի պրոբացիայի և միջնորդության ծառայություն, ծանոթացել ոլորտի չեխական փորձին, այնուհետև ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի պետական ծառայության կայացմանն ուղղված աշխատանքները:

ՀՀ արդարադատության նախարար՝

Դավիթ Հարությունյան